

նիսթանըն լուսաւորիչի օլան եակընդ պիր
յաթըն դերքի ճէմիլիլէ իֆթիլիար իսիւյ .
վէ քէմիլիլէ թէսէլլի պուրազազ եէր-
տէ , ապամէթ ու քէրամէթին մէրքէլլ պու-
լուան Բօմանըն պիլիլէրճէ ալիլիլէրի իլէ
միւշէրլէֆ վէ միւթէսէլլի գրլընաճազար
արր .

... Էֆէնտի .
Ամսոյ 20 ին վսեմ . կուսակալը Մու-
շէն հեռագրեց 'ի կարին , թէ - Ս . Բօմանու-
վանից գոյքերէն նորէն հետեւեալները գըս-
նուերէ խիզանու խալթիլ գեղէն .

3 հատ եպիսկոպոսական չուրջառ իւս-
տիւֆան .
400 տիրէմ արծաթ .
1 արծաթեայ դուրծի աւետարանի .
1 սկիհ .

վսեմ . կուսակալը Մշոյ մէջ մասնաժո-
ղովը հաստատեց 'ի իր նախագահութեամբ
որոյ գործ պիտի ըլլայ քննել ու կարգադ-
րել Մշոյ երկրի անկարգութիւնները , Բայց
գարմանային այն է որ կ'զգին , այն ալիւ-
ֆրգերը չարագործները մեծ պատուով կըն-
դուուին Նորին վսեմութիւնէն . այս բանով
որքան ունեք կապեալ մեծք ոչ կը կա-
պեալին , քանիչ շատ վստահ ենք իւր բա-
րեարտութեան եւ արդարութեան վրայ . այլ
մեզ հետ ամէն մտածողներ կը կապեալին
նորին վսեմութեան հետ գնացող մէկ քա-
նիլի վրայ . . . գործը տեսնանք .

Մեծ . Կանիլէ Էֆէնտիին մասնաժողովին
մէջն է . որուն վրայ շատ մեծ համարում
կայ ամէն կողմէն . բայց Յովսէփեան Մեծ .
Գալիք աղան այլ էթէ մասնաժողովոյն մէջ
գտնուէր , յորհրդին աւելի կըլլար . վսեմի զի
սա բնական աղետալիտ , ազգասէր եւ խո-
հեմ երկրասարդ մը ըլլալով , եւ քանի տա-
րիէ հետէ Մշոյ բոլոր անցից ծանօթ , ինչ-
պէս նաեւ Ս . Բօմանու վսեմը կողպակով-
լէն 'ի վեր մինչեւ այսօր գոմիստիին ան-
դամ էր . եւ մեծ ետանդով կ'ծառայէր տէ-
րութեան պատուոյն եւ ազգային շահուն
վերաբերեալ այս խնդրոյն մէջ , թողով
բողովին իր անձնական գործքերը .

Իերեւս սխալ գիտողութիւն տուած ըլ-
լան մաջ այս արծաթաւոր անձին համար թէ
մասնաժողովոյն մէջը առնուած չէ . մեր վր-
սեմ . կուսակալը ինչպէս լաւ ծանչցած ու
ընտրած էր Մեծ . Կանիլէ Էֆէնտի , նոյն-
պէս եւ կ'ուսացաւէր ծանչալ Յովսէփե-
անը , կ'հաւատեն թէ Մեծ . Կանիլէ Է-
ֆէնտիին եւ թէ շատերուն Մշոյ մէջ ցաւ
առթած է այս բանը . սակայն թերեւս չա-
րախօսներ ունի իրեն այս բարեապակամ
անձը .

Այլ մեզ ծանչնալով իւր կամք եւ ջան
քը , այս քանի տողով կ'արձանագրենք իւր
անունը աղալին բարիարաց ու հայրենասի-
րաց ցանկին մէջը հրապարակական չնոր-
հակալութեամբ . բայց անոյս չեմք մնար
դարձեալ որ ինքը պիտի հրաւիրուի այդ
պաշտօններուն մէջ . շարունակէ իր արդիւ-
նաւոր եռանդազին աշխատութիւնը եւ հաս-
նի տէրութեան չքանչան մը ստանալուն ու
ազգէն գոնութիւն . բայց որ առաւելն է ,
պիտի տեսնէ Մուշը անդորրութեան մէջ .
որում միակ կ'իջալիք ինքն ու ջանադիր է-
թող ճերի իմ այս քանի տող գրուածքիս
այ , գիտեմ իւր անկիւ հոգին չի հաճիր որ
իւր անձը գովարանուի . բայց իմ ալ ծա-
նաչողութիւնս կ'դատապարտէ զիս , եթէ
լուծմ , որնէ այսքան մ'ալ չը գրեմ . . . վա-
նայ լաթմանց գեղէն քանի մը չայ եւ Մէհ-
մէտ Ալին ու իրեն տղան հասան կարին ,
չայերը խիտ թրխ բերան են . արդէն վա-
նայ մէջ իսթիլիթաք եղած են . բայց բոլոր
իրենց ըսածն այս է . « Այո , մեր եկեղեցւոյ
պատերը ապականութեամբ ներսէն ու
գուրսէն ծեփած էին , քանի մը մանր տղոց
եւ քանի մ'ալ տղոց տէր մարդոց քերտներ
ու բերանը միգեցին . ամէն անգամ դմզ
օլամով կ'ընցնեն կ'ընդրեն , բայց ինչ ա-
սանք ինչ . հաղար տուն աշխրաթ մ'իւն ա-
սանք , մեր գեղի մէջ 20 տունէն աւելի կան-
չայերս 18 տուն ենք . դուք կրնաք կամ
զմեզ հանէք այն գեղէն , կամ քորերը մեր
մէջէն դատէք . մեր ընտանիք հիմայ մահու
տաղնապի մէջն են . . . մենք ինչ դատ վա-
րենք . թէ յաղթենք թէ յաղթուինք , այն
քորերը որ մը մեզի կուտեն . . . անոնց ա-
հէն տէրտէր չկայ մեր գեղը , մեռելը կ'թա-
ղենք , ամիսներ կանցնի , նորէն որ մը տէր-
տէր կուգայ կ'կարգայ վրան . միտութիւն
կը մնայ ամիսներով մինչեւ տէրտէր գայ .
մեր մէջ շատ մարդ կայ որ կատարեալ հա-
սակն առեր ու դեռ Ս . պատարագն ինչ է
չ'տեսնէ . տարիներ կանցնին , հաղորդութիւն

չենք կրնար առնուլ . ինչ հայութիւն , ինչ
քրիստոնէութիւն . . . եկեղեցի մը չընկերք
չ'թողին լրացնել , եւ ահա ապականեցին
այսպէս . . . եւն եւն . Ասոնք մեծ բաներ են
էֆէնտի . բայց կարինք տեսնանք ինչ վա-
նան կուտայ ասոնց . . .

2869 յունիս 26
Կարին
— . . . Էֆէնտի

Ինչպէս ուրիշ շատ տեղեր , նոյնպէս
մեր գաւառին մէջ 'ի վաղուց անտի շատ
մը վնասակար եւ անմարդաբոյն սովոր-
ութիւնք տիրած են , որոնց խեղճ Ժո-
ղովուրդները անգիշարար ան աստի-
ճան անձնատուր եղած եւ կապուած են
եւ անոնց տակ կ'ամա . կը հեծեն , միւ-
շէն անգամ գոհեր ալ տալով , իրեւ թէ
նու իրական եւ քրտագան պարտաւոր
թիւններ լինէին .

Ասոնք մեծ օգնելի են ու դարմանի
կարօտ են , սակայն լաւ համոզուած ենք
որ . եթէ յուր կամ վերքը չի յայտնուի ,
դարման ինչպէս կը յուսացուի .

Կը խոստովանիլ որ . լրագիրք այս
մասին մեծամեծ օգուտներ ընծայած են
մեր ազգին . Այն որ ուրիշ տեղերու եւ
բարեբաղ օգտակար եղած է , կրնա՞նք
մեր գաւառին վնասակար համարել . —
բա՛ն լինի .

Ուրեմն ո՞վ պիտի լինի այն սովորու-
թեանց մահախիպ կտորը խոյրը , երբ
անոնք տակ կ'աշխատեն անգիշարար
կը տանի , եւ զգացողն ալ գանձը կան-
գուն պահող տղիտական բոնու թեան
ահէն կը ստանի .

Էֆէնտի , այս մեռելախիպ կտորին
խզման . . . սկիզբ դրաւ ձեր ազգագու-
թիւնին 927 թուոյն մէջն Ամիլ . եւ
Ամիլայ գաւառին վնասակար սովորու-
թեանց նկատմամբ գրուած իրական նկա-
րագրութիւնը , զոր կարդալով մեծապ' ս
ուրախացանք եւ միանշանակն ալ տրու-
մեցանք .

Ուրախացանք , վսեմի զի մեր իսկիւ-
րանորդ արտայայտութիւնն էր .

Տրտմեցանք . վսեմի իսկիւր թէ եւ
շատ ճիշտ , բայց շատ համառօտ էր , եւ
հետեւ ապէս անոնցմէ յառաջ եկած ցա-
ւակ արդիւնքները , բայց չէր արուած ,
երկրորդ ձեռ կողմէն երեք գիտողու-
թիւն մը չէր եղած .

Ինչ եւ ինչ մեծք դարձեալ նոյնպէս
անօրուտ չպիտի ըլլայ հաւատարմով կը
պարտաւորիք միւր շնորհակալութիւնը
յայտնել նոր . հեղինակին .

Եթէ նայն գրութեան հեղինակը իրօք
ճանչցած ըլլալն , անձամբ մեր շնոր-
հակալութիւնը կը յայտնէինք իրեն ,
բայց որովհետեւ իրապէս չենք գիտեր ,
ուստի կը խնդրենք որ . ով որ ալ է 'նէ ,
թէ աս տեղէն եւ թէ աս տեղէն , բա-
րե հոգեւոր ձեռ արգօգուտ թերթին մը
Շոքու մեր անկեղծ շնորհակալութիւնը
յայտնելու . իրաւաբեւութիւնն նորա .

Միւսմը ձեռ լրագրութեան եւ յայտ-
նուած գրութեան ցանկացող
Ամիլայ բնակիչներն .

1869 Յունիս 10
Ամիլ Սարգիս-Էֆէնտի
— . . . Էֆէնտի .

Ձեր ազգագու- Մանգու մէին 927
թուով Ամիլայ եւ Ամիլայ պզգալի սովոր .
թեանց վրայով հրատարակուած յօդու-
ծին մէջ ըսուած էր թէ՝ « Երազկազարդի
իրկիւտ անվարացիները անուրդի հանե-
լու սովորութիւնը աս տարի վերցաւ . »
Ո՛ր էր թէ իրօք ամեն տեղերէն վերնա-
մին այլպիսի պատիւ չը բերերող սովո-
րութիւնները .

Այս բոլոր սխալ չը հասկցուելու համար
կը պարտաւորիմ դարդել . իրաւ է որ
վերցաւ այդ մէկ սովորութիւնը , բայց
ոչ Ամիլայ կամ ուրիշ գեղերուն այլ մի մը
այն կամարակի սովի մէջ , որ սոյնջն ըսե-
լով մեծ պատիւ է . յիշեալ գիւղացւոյ
երանք ' թէ միւս տեղերն ալ անկէ օրինակ
տեսնէին .

Իսկ Տ'առնալիքաւոր իրկիւն վո-
ղոցին մէջ տեղ կրակ վստ երով կ'ընկան
հոնքէս ընելու սովորութիւնը , որ յի-

շեալ յօդուածին մէջ յիշուած էր , միւսն
կամարակաւոր ոյ կը վերադառնի . թէ եւ
ուրիշ տեղերուն ալ դեռ քրիստոնէա-
կան վայելչութեան մէջ մտած չէ .

Կը յուսամ որ . ալ իսաար օրերու
վարացիքը խալիլ սկսած է մարդոց
մտայ վայելն , եւ ոյսու հետեւ պիտի
չուզին պզգալի սովորութեանց ծառայ
լինիլ .

Այսու առթիւ կը յայտնեմ իմ շնոր-
հակալութիւնս թէ ինչեալ յօդուածի
հեղինակին եւ թէ 938 թուոյն մէջն
Ամիլայ գաւառի նկատմամբ հրատարակ-
ուած սոցիալ ու իմաստասիր յօդուածի
հեղինակ Մեծ . Պրոքիտան Էֆէնտիին ,
եւ կը յայտնեմ անկէ զճարտ որ իր հայ-
րենեաց լուսաւորութիւնը եւ բարեյա-
ւութիւնը իրեն նման ազնիւ , հայրենա-
սէր եւ ուսումնասէր արտերու ջանիքը
կը կարտի .

... Էֆէնտի , կը խնդրեմ այս կը-
կուտող գիտողութեան ձեռարգօգուտ
թերթին մէջ տեղ մը տալ շնորհեցէք .
բայց անուս մի դնէք յոյտնի , զե դեռ
ազատ դատման նշողը չէ ծագած , այլ
բուական է իս անու անկ .

1869 յունիս 20 Հայրենա-Սարգիս-Սարգիս

Ո՛ր էր թէ երբեք ինչ հանգ-
չե յարգել էր թէ . . .
Ամիլայ գաւառի կը պզգալ բան չէր .
Ձեռքեր . . .

Ինչ վիճակի մէջ է մարդկութիւնը այն
տեղ , ուր երբ ալ իմացական տաղանդ , կամ
հանճար , այլ միշտ հանգստի տաղանդ , կամ
ոսկի ու արծաթ եւ կամ խոշոր փողոս կը
յարգուի .

Ասոր պատասխանը շատ դիւրին ու շատ
կարճ է , բայց միջին դարու գաւառացի-
ազգայ նիւթի , կամ խոշոր անտնի մը գե-
րադոյն մարդկութիւն վեր արժէք տուող
խաւարին գաւառացի-ազգայ մէկէն 'ի մէկ
չցնցելու համար արժան կը դառնալ նախ
խորհրդանշ ու վերջը ըսել .

Սակայն ինչ կերպով սկսիմ , եւ Ամիլայ
ամէն կարգի ժողովրդաց իսկական պատկե-
րը ինչպէս նկարագրեմ , որ ճշտութեան
գուզնիքաց լինի .

Եթէ անանց հետ բաղադրել պարտա-
ւորեմ , մարդկային սեռին պատիւ չբերելն
գատ' ըստ պահանջման ճարտարութեան գե-
րադոյն էակը (մարդը) նուազ արարածնե-
րէն նուազագոյն ցոյց տալ պիտի ստիպ-
ուիմ .

Աստի կըսեմ ինչ որ պարզօրէն կրնայ
տեսնուիլ . . .

Մարդը Ասիայի շատ տեղեր չէ այժմ այն
իսկական կացութեան մէջ , ուր դրաւ իս-
կզբան նորա Արարիչը . չունի այն բարո-
յական զարդը , որով զեցոյց Արարչին
ձեռքը , եւ չտառայեր այն ցանկալի նպա-
տակին , որուն համար ստեղծած է բարու-
թեան հայրը .

Այլ նա՞ եթէ ճշմարտը ըսել պարտք է ,
թշուառութեան իսկական պատկեր մ'է այ-
սօր , եթէ պատմութեան նայինք , միջին
դարը գանի իր զարդէն մերկացնելով եւ բա-
նականութիւնն ու անձնականութիւնը յա-
վըտակելով բանական եւ իմացական էակը
անբան ու անգիշար հանքի մը ստորակարգեց
եւ ինքեց այնպիսի տգիտութեան կնիքով ,
որմէ ազատուելու արագան պարտաւորու-
թիւն մը ըլլալը խորհող կամ միտքէն անցը-
նող անգամ հազուադիւրէն է .

Միչին դարու ծնած պզգալի եւ ֆե-
սակար սովորութիւնները իրեւ Աստուա-
ծային արագան պատմութեան ճշդիւ կա-
տարելու մեծ փոթ ունի , որոնց զգալի եւ
չօշալիլի ֆեատերներու տակ անգայայտա-
կը հեծէ ու կամաւ զո՞ կը լինի . Անանկ որ'
անանց զիճակը լաւ դիտող մը ուրիշ վը-
ճիւ պիտի չկրնայ տալ , բայց եթէ ըսել թէ
անասունը իմաստագոյնք են քան զայսպի-
սի օրդիս մարդկան յազգա իւրեանց .

Էֆէնտի , Ասիայ շատ կողմեր , որ քա-
ղաք , կամ գիւղ մտնես , առջեւ թշուա-
ռութեան տեսարան մը կը բացուի , ամէն տե-
սակ բազմաթիւ ժողովուրդներ գերի են տղի-
տութեան , գերի են խոշոր անուանիւրու ,
գերի են ոսկրի պահապաններու եւ գերի են
մահաբար սովորութեանց , Մարդկային վար-
չութեան սանձը բանավարութեան ձեռքը

չէ , այլ մէկ , կամ մէկ քանի խոշոր անուն
կրողներու ձեռք է . յեղճ ժողովուրդը կը
կարծէ թէ՝ ով որ իրաւ կամ հարստութեան
խոշոր անուն ունի , ինք անոր հրամանն
կախեալ լինելու պարտաւոր է . մինչեւ ան-
գամ կը տեսնես այնպիսի անձինք , որ թէ-
եւ աղքատ , բայց գլուխը լեցուն ու բա-
նիւրուն են , սակայն քսակը լեցուն ու գը-
լուխը փողունի մը հրամանը չեղած չարժի
չեն համարձակիլ . Ասոր պատճառը երբ կը
հարցունես , կըսեն թէ՝ անկալ հարուստ է ,
իրաւ , կամ ստացուածք շատ ունի , ա-
սոր համար մենք չենք կրնար ազգային
ինչ եւ ինչ յառաջադիւրութեան համար շար-
ժում կամ կարգադրութիւն մը ընել անանց
անոր հրամանին . Այս խեղճ մարդիկը չեն
խորհիլ թէ՝ այն հարուստը ինչ իրաւուն-
քով եւ ինչ սկզբունքով իրենց վրայ իշխող
եւ հրամայող դարգած է . Եթէ ոտար լրիւ
կամ երկու սենեակ աւելի ունեցած լինե-
լուն իրաւունքով կամ սկզբունքովն է , ճիշդ
աղ նոյն սկզբունքով պիտի ընդունի՞ ախ
հարուստը՞ իր իշխանութիւնն ստորին սեպով
երբ ունեցածը կորսուի .

Միթէ իրաւունք եւ ճշմարտ սկզբունք
չէ՞ , որ նիւթական տաղանդով յարգել , կամ
իշխող հանդիսացող անձը , նիւթական տա-
ղանդը կորսուած ատեն ալ՝ անյարգի եւ
իշխեալ ու ստորին սեպով .

Միթէ խելացիութիւնն է եղծանելի բա-
նին կապուիլ մնալ եւ չյարգել անկողնա-
սկի հանճարը , որ մարդկային սեռին յա-
ռաջադիւրութեան ու երջանկութեան հո-
գին է .

Արդ՝ ուր որ աս ինքնակոչ իշխողներն
անընդհատ գտնուած են , հոն ժողովուրդը
իր իսկական պարտքն ու հետեւեալն ինք-
զինքը կորսնցնելով թշուառութեան մէջ
լինած է . որ ըսել է՝ աս ինքնակոչ իշխան-
ներն՝ իրենք օգուտ մը չընելէն դատ , ժո-
ղովրդեան ջանիքն ալ զլխովին արդիւր ե-
ղած են .

Շատերուն յայտնի է որ՝ ասոնց էն խո-
շոր տեսակները Ամիլայ գաւառէն դուրս ե-
կած լինելուն համար՝ իրենց հայրենիքը
թմբած մնացեր է մինչեւ այն կէտը , երբ
զեռ անոնք խորտաբար կորոտային , իսկ
երբ անոնց հոգիստ հրեշտակը եղաւ աս
նոր դարը , յայնմ հետէ սկսաւ քիչ մը ժո-
ղովուրդը շարժիլ , եւ պիտի շարժի , եթէ
զլխովին արգելքները վերան .

Հարուստը կը կարծէ թէ՝ ինք է ժողո-
վրդեան տէրը , ժողովուրդն ալ կը կարծէ
թէ՝ ինք գործի տէր չէ , այլ հարուստը մը
հրամանին տակ շարժող մեքենայ մը . ուս-
տի ուր որ քաշուի , հոն կերթայ , որոյ հե-
տեւութիւնն է թշուառութիւն եւ տղի-
տութիւն .

Աս թշուառութիւնն ու տգիտութիւնը
ի նորոյն այն խոշոր ամբարից իրենց հայ-
րենեաց վրայ այն աստիճան ծանրացած է
եղեր որ՝ դեռ այս դարու մէջ անգամ
թմբած լինելով մեծ մասը չզգար ինչեալ
ֆեատակար սովորութեանց հասուցած բա-
րոյական շարժը , զորս չտեսնելու եւ չըզ-
գալու համար իրօք քարէ սիրտ մը ունեալ
պէտք է .

Ցաւալի բան չէ՞ որ դեռ անանկ ֆեատա-
կար սովորութիւնները վերնալ չուզող եւ
վերցնելու աշխատողներուն ալ դէմ արտն-
ջացող մարդիկ գտնուին , այն ալ ոչ Ամիլայ
մէջ , այլ Պոսոյ նման լուսաւորեալ մարա-
քաղաքի մը մէջ .

Ամիլայ մէջն բաւական թուով խելահաս
մարդիկ եւ կանայք մեծ ջանք ունին այն
տեսակ մահաբար սովորութիւնները վեր-
ցունել . քանզի լաւ համոզուած են որ՝ ի-
գական սեռը ան սովորութեանց երեսէն
շատ ախտերու ենթակալ եղած է . օրինակի
համար , ջղային տկարութիւններ , լուսնո-
տութիւն եւ պարանոցի ալանդակ ունեցե-
նիւր . որոնց տակ կանայք կը ճնշուին , եւ
զորս բուժելու համար անբուժելի մնալով վեր-
ջապէս մահուան ճիւղաններուն կը մատուին .

Քանի քանի մանկունք ծաղիկ ախտէն
գո՞հ կը լինին առանց պատուաւոր թողուե-
լով . քանզի այնպիսիներ կը գտնուին , որ
տղան պատուաւոր տալ Աստուծոյ դէմ
մեծ մեղք կը համարին .

Ասոնց հետ կցողը եղող խել մը ուրիշ
մահաբար նախապաշարուածներ եւ ստաժին
յորդներ ալ պակաս չեն . . . որոնք ֆիզի-
գական , մտաւորական եւ կրօնական զար-
գացման ու յառաջադիւրութեան մեծ ար-
գելք են .

